Հայաստան

Նախագահ Սերժ Սարգսյանը վերընտրվեց փետրվար ամսին, իսկ իշխող Հանրապետական կուսակցությունը հավաքեց ձայների գերակշռող մասը մայիսին կայացած Երևան քաղաքի ավագանու ընտրություններին: Թեև երկու ընտրություններն էլ ընդհանուր առմամբ լավ էին կազմակերպված, այնուամենայնիվ, երկուսն էլ ստվերվել էին ընտրողների հանդեպ գործադրված ճնշումների, ընտրակաշառքի, գործող թեկնածուների օգտին վարչական ռեսուրսների չարաշահման և քաղաքացիների բողոքների նկատմամբ ոստիկանության արձագանքի բացակայության մասին զեկույցներով:

Ոստիկանությունում պահվող անձանց նկատմամբ շարունակվում են վատ վերաբերմունքի դեպքերը: Կառավարությունը դեռևս չի առաջարկել որևէ իրական քաղաքացիական այլընտրանք այն զինապարտների համար, որոնք, խղճի շարժառիթներով պայմանավորված, հրաժարվում են զինվորական ծառայությունից: Իշխանությունները պատշաճ հետաքննություն չեն իրականացրել բանակում մտահոգիչ քանակությամբ ոչ մարտական մահացության դեպքերի վերաբերյալ: Քննության չեն առնվել նաև խաղաղ ցուցարարների վրա կազմակերպված անհայտ սադրիչների հարձակումները:

Հեռարձակվող ԶԼՄ-ների շրջանում առկա է բազմակարծության պակաս, և տարվա ընթացքում լրագրողների և ԶԼՄ-ների աշխատակիցների նկատմամբ բռնության և ոտնձգության մի քանի միջադեպեր են պատահել: Լուրջ խնդիր են սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված ճնշումները և խտրականությունը ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական գործիչների կողմից: Բյուրոկրատական սահմանափակումները խոչընդոտում են ուժեղ ցավազրկող դեղորայքի հասանելիությունն անբուժելի հիվանդություններով տառապող անձանց համար:

Նախագահական և ՏԻՄ ընտրություններ

Միջազգային դիտորդները, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) գլխավորությամբ, եզրակացրել են, որ փետրվարին կայացած նախագահական ընտրությունները եղել են «ընդհանուր առմամբ լավ կազմակերպված», սակայն նշել են ԵԱՀԿ-ի և Եվրոպայի Խորհրդի չափանիշների այնպիսի «լուրջ խախտումներ», ինչպիսին է, օրինակ, ընտրողների նկատմամբ ճնշումների գործադրումը: ԵԱՀԿ-ն նշել է նաև այլ խախտումներ, այդ թվում՝ իշխանությունների կողմնակալության դրսևորումը հօգուտ գործող թեկնածուի,

վարչական ռեսուրսների չարաշահումը և գործող թեկնածուի վստահված անձանց միջամտության դեպքերը: Տեղական դիտորդները զեկուցել են ընտրատեղամասերում կողմնակի անձանց ներկայության, քաղաքական կուսակցությունների և ընտրական հանձնաժողովների անդամների՝ դիտորդների և լրագրողների նկատմամբ ճնշում գործադրելու բազմաթիվ փորձերի և գործող թեկնածուի օգտին համատարած լցոնման մասին:

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, ով Հանրապետական կուսակցության անդամ է, վերընտրվել է մայիսի 5-ին կայացած ավագանու ընտրությունների ժամանակ: Տեղական դիտորդական խմբերն արձանագրել են ընտրակաշառքի, բազմակի քվեարկության և դիտորդական առաքելություն իրականացնող անձանց ահաբեկման միջադեպեր իշխանամետ ակտիվիստների կողմից:

Հավաքների ազատություն և հարձակումներ ակտիվիստների վրա

Օգոստոսին, ոստիկանությունը ուժ է կիրառել՝ ցրելու Երևանի կենտրոնում հավաքված մի խումբ քաղաքացիների և քաղաքացիական ակտիվիստների, ովքեր պահանջում էին դադարեցնել բարձրահարկ շենքի կառուցումը քաղաքի կենտրոնում: Ոստիկանությունը կարճ ժամկետներում բերման է երթարկել շուրջ 26 ցուցարարների՝ նրանցից առնվազն մեկին ծեծի ենթարկելով ոստիկանության բաժանմունք տանելու ճանապարհին: Վերջինս անհապաղ հոսպիտալացման կարիք է ունեցել: Հոկտեմբերին, Հայաստանի օմբուդսմենի գրասենյակը հանգել է այն եզրակացության, որ ոստիկանությունը դիմել է անհամաչափ ուժի գործադրման, սակայն նրանց նկատմամբ սույն զեկույցի հրապարակման պահին որևէ կարգապահական տույժ դեռևս չի կիրառվել:

Սեպտեմբերին, Երևանի խաղաղ ցուցարարների հանդեպ տեղի է ունեցել հարձակումների տարափ, որն ըստ երևույթին, ձեռնարկվել է բնակչությանը հուսալքելու և նրանց մասնակցությունը երկու խաղաղ բողոքի ակցիաներին կանխելու նպատակով: Սեպտեմբերի 5-ին, մոտ վեց անհայտ սադրիչներ հարձակվել են քաղաքացիական հասարակության հայտնի ակտիվիստներ՝ Հայկակ Արշամյանի և Սուրեն Սաղաթելյանի վրա, երբ նրանք վերադառնում էին Հանրապետական կուսակցության շտաբի դիմաց անցկացվող խաղաղ ցույցից, որտեղ վերջիններս բողոքում էին ընդդեմ Մաքսային Միությանը Հայաստանի անդամակցության վերաբերյալ նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարության:

Սաղաթելյանն ստացել էր քթի կոտրվածք, նրան անհրաժեշտ էր վիրաբուժական միջամտություն և հոսպիտալացում: Արշամյանին ցուցաբերվել է բժշկական օգնություն բազմաթիվ մարմնական վնասվածքներ ստանալու պատճառով: Սեպտեմբերի 4-ին, քաղաքապետարանի շենքի դիմաց անցկացվող քաղաքային տրանսպորտի գնի ժամանակավոր բարձրացման դեմ կազմակերպված նստացույցից հեռանալուց հետո ակտիվիստ Արման Ալեքսանյանը ենթարկվել է հարձակման մոտ

10 անհայտ սադրիչների կողմից: Բազմաթիվ վնասվածքներով և գլխի տրավմայով՝ նա անհապաղ տեղափոխվել է հիվանդանոց: Օգոստոսի 25-ին, մոտ վեց անհայտ անձինք հարձակում են գործել երկու ակտիվիստներ՝ Բաբկեն Տեր-Գրիգորյանի և Միհրան Մարգարյանի վրա քաղաքապետարանի շենքի մոտ անցկացվող նստացույցից հեռանալուց անմիջապես հետո: Այս պահին հետաքննությունը դեռևս ընթացքի մեջ է:

Մեծացել է Կանանց ռեսուրսային կենտրոն հասարակական իրավապաշտպան կազմակերպության նկատմամբ ազգայնական խմբերից հնչող սպառնալիքների թիվը, ներառյալ ֆեյսբուքյան օգտատերերի մեկնաբանությունները, որտեղ վերջիններս սպառնացել են պայթեցնել կենտրոնը և կտրել ակտիվիստների կոկորդները: Չնայած այն հանգամանքին, որ այս սպառնալիքները փոխանցվել են ոստիկանությանը, սույն զեկույցի հրապարակման պահին իշխանությունները դեռևս հետաքննություն չէին իրականացրել:

Նոյեմբերին, ձերբակալվել են ընդդիմության ղեկավար Շանթ Հարությունյանը, ինչպես նաև 13 ակտիվիստներ, երբ վերջիններս բախվել են ոստիկանության հատուկ ջոկատայինների հետ՝ դեպի նախագահական նստավայր երթ կատարելու փորձի ժամանակ: Իշխանությունները պնդում են, որ խումբը մտադիր է եղել բռնի կերպով գրավել շենքը: Զեկույցի հրապարակման պահին բոլոր ձերբակալվածները գտնվում էին նախնական կալանքի տակ և մեղադրվում իշխանությունների նկատմամբ բռնություն կիրառելու մեջ: Հարությունյանը հայտարարել է, որ կալանքում գտնվելու ժամանակ ոստիկաններն իրեն ենթարկել են ֆիզիկական խոշտանգումների, սակայն իշխանությունները սույն պնդումները քննության չեն առել: Նոյեմբերի վերջին, երևանյան դատարաններից մեկը պահանջել է Հարությունյանին տեղափոխել հոգեբուժական հաստատություն՝ հարկադիր փորձաքննության ենթարկելու նպատակով:

Խոշտանգում և վատ վերաբերմունք

Ըստ տեղական իրավապաշտպանների՝ ոստիկանությունում ձերբակալված անձանց նկատմամբ շարունակվում են խոշտանգումներն ու վատ վերաբերմունքի դեպքերը, և խոշտանգման սահմանումը Հայաստանի օրենքում չի համապատասխանում միջազգային չափանիշներին, քանզի այն չի ներառում պետական պաշտոնյաների կողմից կատարված հանցագործությունները: Իշխանությունները հաճախ հրաժարվում են քննության առնել վատ վերաբերմունքի մասին վկայող հայտարարությունները կամ ստիպում են քաղաքացիներին ետ վերցնել իրենց բողոքները: Ոստիկանությունը խոշտանգումներ է կիրառում՝ կասկածյալներից և ականատեսներից խոստովանական ցուցմունքներ և մեղադրական հայտարարություններ կորզելու նպատակով:

Օրինակ, Արթուր Կարապետյանը՝ ձերբակալված 2012թ. հոկտեմբերին, թմրամիջոցների ապօրինի տարածման մեղադրանքով, բողոքել է կալանքում

ոստիկանների կողմից խոշտանգումների ենթարկվելու մասին: Ըստ նրա փաստաբանի՝ Կարապետյանը ցույց է տվել նրան իր ոտքերի վրայի վերքերը, որոնք, իր խոսքերով, ծեծի հետևանք էին: Թեև Կարապետյանին ազատ են արձակել դեկտեմբերին, իսկ 2013թ. ապրիլին՝ հանել նրա նկատմամբ եղած բոլոր մեղադրանքները, ոստիկանությունը պատշաճ քննության չի ենթարկել վատ վերաբերմունքի մասին նրա պնդումները:

2012թ. նոյեմբերին, Միեր Անդրեասյանն առաջին ատյանի դատարանում վկայել է, որ դաժան ծեծի է ենթարկվել Երևանի ոստիկանների կողմից կողոպուտի մեղադրանքով ձերբակալվելուց հետո: Անդրեասյանը հայտնել է, որ, այլևս ի վիճակի չլինելով դիմանալ շարունակական տանջանքների՝ փորձել է ինքնասպան լինել, գլխի օգնությամբ կոտրելով քննիչի գրասենյակի պատուհանը և փորձելով դուրս ցատկել, սակայն ոստիկանները կանխել են նրա փորձը: Թեև մարտին Երևանի դատարանը հանել է փախուստի փորձ կատարելու մեղադրանքն Անդրեասյանից, վերջինիս պնդումներն իր հանդեպ գործադրված բռնության մասին քննության չեն առնվել:

Չարաշահումները բանակում

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը զեկուցել է հոկտեմբերի 31-ի դրությամբ բանակում տեղի ունեցած ոչ մարտական մահացության առնվազն 29 դեպքերի, այդ թվում՝ 7 ինքնասպանությունների մասին: Տեղական իրավապաշտպան խմբերը փաստագրել են, որ Պաշտպանության նախարարությունը պատշաճ կերպով չի հետաքննել, չի բացահայտել ոչ մարտական մահվան դեպքերի հանգամանքները և չի պատճառաբանել բռնության փաստերը, որոնք առկա են եղել որպես ինքնասպանություն որակված մահվան դեպքերում:

Հունիսին, Ազգային ժողովը փոփոխություններ է կատարել այլընտրանքային զինվորական ծառայության մասին օրենքում՝ այլընտրանքային աշխատանքային ծառայությունից զինվորական վերահսկողությունը վերացնելու և ծառայության ժամկետները 42-ից մինչև 36 ամիս նվազեցնելու նպատակով: Տեղական ակտիվիստները բարձրաձայնել են այս փոփոխությունների առթիվ իրենց մտահոգությունները՝ այդ թվում նշելով որոշումների կայացման մեջ Պաշտպանության նախարարության շարունակվող դերի, ընտրության ոչ հստակ չափանիշների, ինչպես նաև ծառայության ժամկետի վերաբերյալ, որն ամեն դեպքում ավելի երկար է քան պարտադիր զինվորական ծառայությունը: Նոյեմբերի կեսերի դրությամբ, 33 Եհովայի վկաներ, որոնք դատապարտվել էին այլընտրանքային ծառայությունից հրաժարվելու համար, ազատ են արձակվել և, այնուամենայնիվ, պարտադրված են եղել այլընտրանքային ծառայություն անցնել:

Խոսքի ազատություն

Հայաստանում գործում են բազմազան տպագիր և առցանց լրատվամիջոցներ, սակայն հեռարձակվող լրատվամիջոցների շրջանում առկա է բազմակարծության պակաս: Այսպես, օրինակ, Հայաստանի 13 հեռուստաընկերություններից միայն մեկն է

իրականացնում քաղաքական թոք-շոուների ուղիղ հեռարձակում: Միջազգային դիտորդները նշել են, որ նախագահական ընտրություններին հաջորդած զարգացումները ԶԼՄ-ների կողմից լուսաբանվել են «խտրական մոտեցման» դրսևորումով և ընտրությունների անցկացման վերաբերյալ քննադատական տեսակետների զգալի սահմանափակումներով:

Տեղական ԶԼՄ-ների մոնիտորինգի խումբ հանդիսացող Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն հաղորդել է լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնությունների վեց միջադեպերի մասին, որոնք արձանագրվել են 2013թ. առաջին կիսամյակի ընթացքում: Մի դեպքում, մի քանի երիտասարդներ բռնի կերպով խոչընդոտել են «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» կազմակերպության ներկայացուցիչ Արտակ Համբարձումյանին՝ արձանագրելու Արտաշատում նախագահական ընտրությունների ժամանակ տեղի ունեցող քվեատուփերի լցոնումը: Հունիսի դրությամբ, հանձնաժողովը փաստագրել էր լրատվամիջոցների և լրագրողների հանդեպ գործադրված ճնշումների 34 միջադեպեր:

Պալիատիվ խնամք

Ափիոնային դեղորայքի դեղատոմսերի և գնումների բարդ ու ժամանակատար հայաստանյան ընթացակարգերը խոչընդոտում են պատշաճ պալիատիվ խնամքի մատուցմանը՝ ավելորդ տանջանքների դատապարտելով մահացու հիվանդություններով տառապող անձանց: Թեև մորֆինը անբուժելի հիվանդ մարդկանց կյանքը բարելավելու անվտանգ, արդյունավետ և էժան միջոց է, Հայաստանում մորֆինի և այլընտրանքային ուժեղ ափիոնային դեղորայքի սպառման ներկայիս մակարդակը բավարար չէ քաղցկեղով հիվանդ բոլոր մարդկանց օգնություն տրամադրելու համար և շատերին թողնում է առանց համապատասխան ցավազրկող դեղորայքի իրենց հիվանդության վերջին փուլերի ընթացքում:

Սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն

Տեղական լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր (ԼԳԲՏ) մարդկանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ակտիվիստներն իրենց մտահոգությունն են արտահայտել Հայաստանում ահազանգող աստիճանի հասնող հոմոֆոբիայի կապակցությամբ: Ըստ Հայաստանի «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի (ՓԻՆՔ Արմենիա)՝ տեղական իրավապաշտպան խմբի, սեքսուալ ծառայությունների ոլորտում զբաղված տրանսգենդեր կանայք հաճախ են ենթարկվում խոշտանգումների, որոնց մասին ոստիկանությանը հայտնելու դեպքում, չեն ստանում որևիցե պաշտպանություն վերջինիս կողմից: ՓԻՆՔ Արմենիան նաև հայտնել է, որ շարունակվում են տրանսգենդեր անձանց նկատմամբ աշխատանքային խտրականությունը, առողջապահական համակարգից նրանց օգտվելու հնարավորության խոչընդոտումը և նրանց հանդեպ ֆիզիկական և հոգեբանական բռնությունները բանակում, ընտանիքներում և հանրության մեջ:

Համաձայն Amnesty International-ի օգոստոսյան զեկույցի՝ պետական պաշտոնյաները հաճախ արդարացնում են ԼԳԲՏ անձանց նկատմամբ կատարված բռնարարքները՝ դրանց բնութագրելով որպես «ավանդական արժեքների» արտահայտություն: Հուլիսին, Հայաստանի ոստիկանությունը հանդես է եկել վարչական իրավախախտումների մասին օրենքում փոփոխություն կատարելու առաջարկությամբ, այն է՝ սահմանել մինչև 4,000 ԱՄՆ դոլարի չափով տուգանք «ոչ ավանդական սեռական հարաբերություններ խրախուսելու համար»: Առաջարկությունը հետագայում հետ է կանչվել:

Հուլիսին, Երևանի դատարանը դատապարտել է երկու անձանց՝ 2012թ. մայիսին մասնավոր սեփականությանը վնաս հասցնելու մեղադրանքով: Վերջիններս ռումբ էին նետել DIY բարի վրա, ուր հաճախ էին այցելում ԼԳԲՏ և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ակտիվիստներ: Պատկերված գրաֆիտին վկայում էր, որ հարձակման թիրախում են եղել ԼԳԲՏ մարդիկ: Հարձակվողներից մեկը դատապարտվել է 19 ամսվա ազատազրկման, իսկ մյուսը՝ երկու տարվա պայմանական ազատազրկման: Նրանք երկուսն էլ համաներում ստացան հոկտեմբերին: Նրանց նկատմամբ չափազանց մեղմ պատիժ սահմանելու կապակցությամբ իրենց վրդովմունքն են արտահայտել տեղական իրավապաշտպան խմբերը: Հայաստանում բացակայում է ատելություն պարունակող խոսքի վերաբերյալ օրենսդրություն:

Հիմնական միջազգային դերակատարներ

Հայաստանի միջազգային գործընկերները հայտնել են, որ փետրվարյան նախագահական ընտրությունները անց են կացվել սահուն, սակայն ի լրումն ԵԱՀԿ-ի, Եվրոպական Միությունը, Եվրոպայի Խորհուրդը և այլ կազմակերպություններ ևս կարևոր են համարել նշել, որ տեղի են ունեցել ԵԱՀԿ ընտրական չափանիշների խախտումներ, ներառյալ՝ վարչական ռեսուրսների չարաշահում, հանրային կառավարման անաչառության պակաս և ընտրողների նկատմամբ ճնշում գործադրելու դեպքեր:

2013թ. սեպտեմբերին, ԵՄ պատվիրակությունը Երևանում իր խորը մտահոգությունն է արտահայտել քաղաքացիական հասարակության անդամների նկատմամբ գործադրված հարձակումների և մարդու իրավունքների պաշտպանների ահաբեկման դեպքերի առթիվ:

Եվրոպական հարևանության քաղաքականության առաջընթացի վերաբերյալ մարտին լույս տեսած իր զեկույցում, ԵՄ-ն գնահատել է Հայաստանի «լուրջ ջանքերը՝ գործադրված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հաստատման ուղղությամբ», սակայն նաև ընդգծել է հոմոֆոբիայի աճը և լրատվամիջոցների ոչ բավարար անկախությունը:

Մարդու իրավունքների վերաբերյալ ապրիլին լույս տեսած իր զեկույցում, Միացյալ Նահանգների Պետդեպարտամենտը նշել է Հայաստանում առկա մարդու իրավունքների հետ կապված մի շարք խնդիրներ, այդ թվում՝ կյանքից կամայական կամ ապօրինի զրկելը, խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը, խոսքի ազատության և խաղաղ հավաքների արգելումը:

Սեպտեմբերին, Հայաստանը ստորագրել է «Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին» Միավորված Ազգերի Կոնվենցիան՝ նրանց ապահովելով անաչառ, մարդասիրական և օրինական պայմաններով:

Թարգմանցված է անգլերենից